

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 4

02.11.2020թ.

1. 2020-2021 ուս. տարվա ուսման վարձավճարների փոխհատուցման փոխատեղման (ռոտացիայի) վերաբերյալ.

1.1. Հաստատել դեկանատների, Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի (հիմնական ընդհանուր կրթությամբ (9-րդ դասարանի հիմքով) 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերի), ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի կողմից ներկայացված (միջին մասնագիտական կրթական ծրագրի հիմնական ընդհանուր կրթությամբ (9-րդ դասարանի հիմքով) 2-րդ կուրսերի), «ՀԱԱՀ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի ուսանողների 2020-2021 ուս. տարվա ուսման վարձավճարների փոխհատուցման փոխատեղման (ռոտացիայի) ցուցակները (հրամանները կցվում են).

2. 2019-2020 ուս. տարվա առարկայական և կրեդիտային պարտքերի հանձնման արդյունքների ամփոփման վերաբերյալ.

2.1. ՀԱԱՀ ռեկտորատի նիստի ընթացքում հեռացման ներկայացված տարբեր ստորաբաժանումների ուսանողներին հեռացնել համալսարանից (*հրամանները կցվում են*): Հեռացման վերաբերյալ նախապես իրազեկել ուսանողներին՝ էլեկտրոնային հասցեներին գրություն ուղարկելով:

2.2. Ակադեմիական մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք ունեցող ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս՝ կրեդիտային պարտքերով (*հրամանները կցվում են*):

2.3. Ակադեմիական 12 կրեդիտից ավելի առարկայական պարտքեր ունեցող ուսանողներին հեռացնել համալսարանից:

2.4. Պատերազմի առաջնագծում կամ զորավարժանքներին մասնակցող կրեդիտային և առարկայական, վարձավճարի պարտքեր ունեցող ՀԱԱՀ ուսանողների հարցը քննակել ռեկտորատի հաջորդ նիստերի ընթացքում: Փաստաթղթերի ձևակերպման նպատակով համագործակցել ՄՌԿ և երկրորդ բաժինների հետ, և գրավոր հարցումով դիմել զինվորական կոմիսարիատներին:

2.5. Ազրոնոմիական ֆակուլտետի ՊԳՏ 4-րդ կուրսի ուսանող Սարգիս Հովհաննեսի Սոնյանին մեկ շաբաթյա ժամկետում տալ առարկաների վերահանձնման հնարավորություն՝ բացառության կարգով: Այդ նպատակով կազմակերպել 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի առարկայական երկու պարտքերի լրացման ինտենսիվ դասընթացներ:

2.6. Ուսանողական իրավունքները վերականգնած, առաջնագծում չգտնվող կամ գորավարժանքներին չմասնակցող ուսանողներին հնարավորություն ընձեռել հանձնելու առարկայական պարտքերը:

2.7. Հանրապետությունում նոր տիպի կորոնավիրուսի համավարակի պայմաններում դասախոսական անձնակազմի, ստորաբաժանման ղեկավարի վարակման կամ ինքնամեկուսացման դեպքում՝ ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ժամանակին փոխանցել համալսարանի կառավարման e-Buh համակարգով կամ էլեկտրոնային հասցեներով:

3. 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձավճարների զեղչերի վերաբերյալ.

3.1. Հաստատել ՀԱԱՀ ռեկտորատի նիստի ընթացքում ուսման վարձավճարի զեղչման համար համալսարանի ստորաբաժանումների կողմից ներկայացված ուսանողների ցուցակները (*հրամանները կցվում են*):

4. 2020-2021 ուս. տարվա ընթացքում ուսման վարձավճարների փոխհատուցման փոխատեղմանը սոցիալական տարբեր խմբերին պատկանող (արտոնյալ խմբի) ուսանողների մասնակցության և բարձր առաջադիմությամբ որոշ ուսանողների՝ անվճար համակարգում ուսումնառելու խնդիրների վերաբերյալ.

ԱԲԱ ֆակուլտետի բարձր ՄՈԳ ունեցող երկու ուսանողներին բացառության կարգով ընձեռել հնարավորություն մինչև ս.թ. նոյեմբերի 6-ը ներկայացնել ուսման վարձավճարի զեղչի դիմումներ:

5. ԳՄՄ 2-րդ կուրսի ուսանող Ալբերտ Վաղարշակի Ավետիսյանին առողջական խնդիրների պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպելու հարցի վերաբերյալ.

Ազրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» կրթական ծրագրի 2019-2020 ուս. տարվա առկա ուսուցման 2-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Ալբերտ Վաղարշակի Ավետիսյանին, ում ուսման վարձավճարը 100%-ով փոխհատուցվում էր ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, տրամադրել ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի պատճառով:

6. Հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողների նախադիպլոմային և արտադրական պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ.

ՀԱԱՀ հեռակա ուսուցման դեպարտամենտի, Միսիանի և Վանաձորի մասնաճյուղերի 6-րդ կուրսի ուսանողների նախադիպլոմային պրակտիկաները համարել կայացած, իսկ 4-րդ և 5-րդ կուրսերի արտադրական պրակտիկաները տեղափոխել 2020-2021 ուս. տարվա 2-րդ (գարնանային) կանչից հետո:

7. 2016թ ապրիլյան քառորյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից (2 ուսանող) կամ մարտական հերթապահություն իրականացրած (2 ուսանող) ՀՈՒԴ ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի սահմանման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի քառորյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած 2019-2020 ուս. տարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 30%-ի չափով.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտ., կուրս	Կրթական ծրագիր	Տարեկ. ուս. վարձ (դրամ)	Զեղչը (դրամ)
1	Կարապետյան Ռաֆիկ Արթուրի	Ֆինանսներ - 4	Ֆինանս. (ըստ ոլորտ.)	400000	120000
2	Խուրդյան Հակոբ Հմայակի	Ագրոբիզնես - 3	Ապրան-քազիտ.	440000	132000

2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի քառորյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից 2019-2020 ուս. տարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 50%-ի չափով:

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտ., կուրս	Կրթական ծրագիր	Տարեկ. ուս. վարձ (դրամ)	Զեղչը (դրամ)
1	Թաղևոսյան Մուրադ Հրանտի	Անասնաբու-ժություն - 2	Ան. սան. փորձաքն.	350.000	175.000
2	Վարդույան Մեսրոպ Արամի	Ագրոնոմիա - 3	Բույսերի պաշտպ.	330.000	165.000

8. 2019-20 ուս. տարվա խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Սուրեն Մամվելի Մաճկալյանի կողմից ուսման վարձավճարի զեղչման համար ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացված դիմումի վերաբերյալ.

ՀՈՒԴ 2019-20 ուս. տարվա խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող, մարտական հերթապահություն իրականացրած (ոչ քառորյա պատերազմի ընթացքում) Սուրեն Մամվելի Մաճկալյանի կողմից ուսման վարձավճարի զեղչման համար ներկայացված դիմումը մերժել՝ հիմք ընդունելով ՄՈԳ-ի ցածր ցուցանիշը և զեղչման համար անհրաժեշտ այլ հիմքերի բացակայությունը:

9. ԻԻՀ քաղաքացի, ՀԱԱՀ հեռակա ուսուցման ասպիրանտ Բիայնա Վահրամյանս Խոսրովիզադի ասպիրանտական ուսուցման ժամկետի ավարտման հետ կապված հրամանագրման խնդիրների վերաբերյալ.

1. Հանձնարարել ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Ա. Տեր-Գրիգորյանին և իրավաբանական քաժնի պետ Ն. Եղիազարյանին՝ ձևակերպել ստեղծված իրավիճակը

պարզաբանող նամակ և Բիայնա Վահրամյանս Խոսրովիզադին ազատել ասպիրանտուրայից՝ ժամկետի ավարտվելու կապակցությամբ:

2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ ասպիրանտների հետ կապված բոլոր գործընթացները ևս կատարել սահմանված ժամկետներում:

10. ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետներում ուսման վարձավճարի պարտքեր ունեցող, սակայն առարկայական պարտքեր չունեցող ուսանողների առկայության վերաբերյալ.

Հանձնարարել ՌԻԳԿ վարչությանը՝ պարզել թերացողներին և հայտարարել նկատողություն:

11. Նոր տիպի կորոնավիրուսի համավարակի պայմաններում ՀԱԱՀ ուսումնական գործընթացի հեռավար կազմակերպման ընթացքում Zoom հարթակով դասավանդման որակի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ.

Հանձնարարել ղեկաններին և ամբիոնի վարիչներին.

- Խստորեն վերահսկել Zoom հարթակով իրականացվող պարապմունքները, բարձրացնել որակը,

- Ապահովել ուսանողների մասնակցությունը պարապմունքներին,

- Սեղմ ժամկետում լրացնել չկայացած՝ բաց թողնված պարապմունքները,

- Դասընթացի ժամի կամ օրվա փոփոխության վերաբերյալ տվյալները հայտնել ամբիոնի վարիչներին, ղեկանատներին, ՌԻԳԿ վարչությանը:

12. Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության և նոր տիպի կորոնավիրուսի համավարակի պայմաններում համալսարաններում ուսումնական գործընթացի լիարժեք կազմակերպման մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ստացված հանձնարարականի վերաբերյալ.

1. Հանձնարարել ղեկանատներին՝ սեղմ ժամկետներում ուսանողներին տեղեկացնել միջանկյալ քննությունների վերաբերյալ՝ էլեկտրոնային հասցեներին ուղարկելով հաստատված ժամանակացույցը:

2. Հանձնարարել ամբիոնի վարիչներին՝ միջանկյալ քննությունների հարցաշարերը սեղմ ժամկետում տեղադրել համալսարանի էլեկտրոնային ուսուցման Moodle հարթակում, իրազեկել ուսանողներին և վերահսկել միջանկյալ քննությունների կազմակերպումն ըստ սահմանված ժամանակացույցի:

13. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի գերմանալեզու առաջին կուրսի մագիստրանտներին Գերմանիայի Դաշնային Հանրապետության Վայհենշտեֆանի անվան կիրառական գիտությունների համալսարանի «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական միջազգային ծրագրում ուսումը շարունակելու նպատակով 01.10.2020թ. մինչև 15.03.2021թ. գործուղում ձևակերպելու, գործուղման ժամկետը

երկարացնելու կամ ուսումը ավարտելու կապակցությամբ գործուղումն ավարտած համարելու և համալսարանից ազատելու վերաբերյալ.

Հաստատել ռեկտորատի նիստի քննարկմանը ներկայացված Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի մագիստրանտների գործուղումների ձևակերպման, գործուղման ժամկետը երկարացնելու և ուսումն ավարտելու կապակցությամբ համալսարանից ազատման ցուցակները *(հրամանները կցվում են)*.

- 2017-2018 ուս. տարվա առաջին կուրսի մեկ մագիստրանտի գործուղումը համարել ավարտած՝ ուսումն ավարտելու կապակցությամբ, և ազատել համալսարանից:

- 2017-2018, 2018-2019 և 2019-2020 ուս. տարիների առաջին կուրսի թվով 9 (3-ական՝ ըստ տարիների) մագիստրանտների գործուղումը երկարացնել,

- 2020-2021 ուս. տարվա առաջին կուրսի թվով 3 մագիստրանտների համար ձևակերպել գործուղում:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ